Օրերի հետ

Եթե մենք լռենք, քարերը կգոռան

«Ով պատմություն ունի, չի կարող ետ չնայել»,- այս իմաստուն խոսքը ծնունդ է մի ժողովրդի բզկտված կյանքից, որ խաչված մնաց արնաշաղախ հողին, ողբաձայն ժայռերին: Ականջ խլացնող ճիչը լսվում է պատմական հայրենիքից ու ձգվում մինչև աշխարհի հեռավոր անկյուններ, ուր դեռ ծխում է ծուխը հայրենի, իսկ ոճրագործի ձեռքերին դեռ արյան հետքեր կան:

Դարի հրամայականն է. մեր գլխին ծանրացել է «տառապապաշտ» պիտակը և մեծ սպասումը՝ մինչև աշխարհը հավատա, ընդունի մեզ բաժին հասած փշրված-ավերված կյանքի եղելությունը:

Աշխարհասփյուռ ու վտարանդի դարձանք: Այս երկու բառերը դարձան մերը, մեր խոսքի անբաժանելի ու հայացած տարրերը: Մեզանից լավ ոչ ոք չհասցրեց իմաստային վերլուծության ենթարկել. դարձրինք մերը, ոչ թե խեղճացած, այլ երկունքից ծնված հավերժահունչ տագնապը մեր աչքի առաջ ունենալով: Քաղաքակիրթ ձևով խոսել սկսեցինք՝ մոռանալով, որ «քաղաքակիրթ» ոճրագործություն չէր եղածը, այլ վայրի-վայրենի սպանդ, խոլական ոճիր: Մեր միակ ու մեծագույն «մեղքը»՝ հիշողությունը՝ տարիների կլորքում ծվարած, անընդմեջ աղոթք է դարձել:

Եվ այդ մրմունջը չի դադարել գաղթի սարսափը վերապրած հայ ընտանիքում, որ 1915 թ-ին թողեց Տարոնը ու լեռներով փախավ՝ մազապուրծ եղած խմբերի հետ: Ճակատագրի բերումով միայն Ազնիվ տատը ողջ մնաց: Փրկված մի բուռ հայը անդարձ-անվերադարձ թողեց էրգիրը, իր հոգում պատառ-պատառ արեց վերադարձի կամուրջները, բռի մեջ ճմլեց վրեժի բոցը և նոր կյանք սկսեց: Նրանց աչքերից վախն էր ծորում: Հազարավորներ չհասցրին մայրանալ... Վիրավոր սրտի միջով մի ողջ ժողովրդի ողբ էր քերծելով անցնում:

Նոր կյանք սկսեց... Բազմանդամ ընտանիքից միայն ինքը ողջ մնաց: Հարազատների մահն իր աչքերով էր տեսել (պատմում էին Ազնիվ տատի թոռները՝ Լևիկն ու Գևորգը): Մի գիշեր Մուսաբեկ անունով քուրդ առաջնորդի գլխավորությամբ ասկյարները հարձակվեցին իրենց գյուղի վրա, բոլորին լցրին մարագները, ոչ

ոք չգիտեր՝ ի՞նչ է լինելու: Մայրը ոսկեդրամ է տվել մի ասկյարի, որպեսզի ծարավից նվաղած դստերը թույլ տան՝ գնա ջուր խմելու: Մինչ երկնքի կապույտի ու իրական գորշության խառնաշփոթում 12-ամյա Ազնիվը ծարավը վախվորած կհագեցներ, վերադարձին սահմռկեցուցիչ տեսարան բացվեց իր առաջ՝ ողջ արհավիրքով... Այրվում էր... Մարագներն այրել էին, իսկ այնտեղ... Անհասկանալի գոռում-գոչյունները մինչ մահ կեղեքեցին հոգին: Հարազատների սրտի զարկերը բաբախեցին իր մեջ: Մարագներից բարձրացող ծխի քուլաների հետ աղիողորմ ճիչը կախվեց ամպերից. «Չմեռա~ն նրանք, այլ սպանվեցի~ն...»:

Բոլորս դարձանք հոգով վիրավորներ: Մեր նախնիներն իրենց հայացքներում տարան ջարդերի պատկերները՝ մեզ մաղթելով խաղաղություն: Հետո գուցե շատերը վանկարկեցին՝ բավական է անցյալով ապրենք, հարատև թշնամանքը խարխլելու է հարաբերությունները: Այս հարաբերություն ասվածը ծիծաղ առաջացնող լացի է նման:

Վերադառնանք Ազնիվ տատի «մանկություն»... Մի հոգատար ձեռք նրան թաքցրեց շամբուտները, որտեղ թաքնվել էին զինված գաղթականներ: Մինչ մութը կպատեր հայի արյունով տամկացած երկիրը, սրտակեղեք տեսարանների ականատես-վկաներ էին դարձել թաքնվածները: Մթնելուն պես ճանապարհ էին ընկել ջոկատ առ ջոկատ՝ ցերեկվա սարսափը միախառնելով գիշերային մթությանը: Ջոկատներում եղած վիրավորներն ու տկարները, չկարողանալով շարունակել ճանապարհը, խնդրել էին իրենց սպանել. միայն թե չընկնեին թուրքի ձեռքը:

Ոչ մի հարազատ չուներ՝ համագյուղացիներից բացի: Գաղթականներն սկզբում Ալեքսանդրապոլում են պատսպարվել (այժմ՝ Գյումրի): Այստեղ ամուսնացել է բախտակից մի գաղթականի հետ, իսկ 1963-1964 թ.թ. տեղափոխվել են Երևան: Տեղափոխվելուց հետո մի օր իրենց հյուրընկալվել է Խաչիկ Դաշտենցը, զրուցել ծերերի հետ:

1981 թ. մահացել է Ազնիվ տատը: Մազապուրծ եղած մի բուռ հայ. նրա սրտի կանչը կյանքի սթափեցնող գոյության մեջ մեզ արթուն պահելու, մեր մեջ երազը չխամրեցնելու և մեզանից խլվածը՝ հոգու անդորրությունը, վայելելու տենչանքն է: Մեր լեռնեն անգամ մարդեղացան, իրենց քարեղեն սրտում դեռ պահում են հավերժություն, ժամանակի մաղձն են կուլ տվել ու խոժոռադեմ սպասում վրեժի վայրկյանի: Մենք ազգատյաց չե՞նք, մեզ դարձրի՞ն վրիժառու: Հիշենք Սևակի հայտնի խոսքերը. «... Ոչ մի ազգ ու ցեղ չի կարող մեզ հանդիմանել որևէ մեկի տունը քանդելու, որևէ մեկի գերեզմանոցը զբոսայգի դարձնելու, որևէ մեկին դավանափոխելու, որևէ մեկին բռնի ծուլելու հանցանքի մեջ: Հիմա դժվար է հաշվել մեր կորստի ու շահածի տարբերությունը: Շահել ենք բարի անուն, այլասեր կոչվելու հպարտություն, բացճակատ ապրելու եզակի հնարավորություն, բայց կորցրել ենք... Թույլ տվեք ընդամենը վերահաստատել, որ դարձել ենք շա'տ-շա'տ-շա~տ վիրավոր, վիրավոր հոգով ու հողով»:

Նաիրա Բաղդասարյան

Ռոստրոպովիչի սերը

1988 թվականի ահեղ երկրաշարժը ցույց տվեց, որ աշխարհում դեռևս կան քաղաքակիրթ ժողովուրդներ, որոնք գիտեն հայ ժողովրդի հնագույն պատմությունը: Այդ օրերին աշխարհի բոլոր ծագերից ինքնաթիռներ էին վայրէջք կատարում Երևան: Տուժածներին օգնելու համար ոտքի ելան նաև արվեստի գործիչներ: Իտալացի մեծ երգիչ Լուչիանո Պավարոտին բարեգործական համերգներ կազմակերպեց Իտալիայում և Ռուսաստանում ու ստացված գումարն ուղարկեց Հայաստան: Շառլ Ազնավուրն իր շուրջը հավաքեց ֆրանսիացի աստղերին և «Արմենիա» երգի ու թողարկած ձայնասկավառակի վաճառքից ստացված հանգանակությունները նվիրեց երկրաշարժից տուժածների փրկությանը: Յուրահատուկ ուշադրության է արժանի ռուս մեծ երաժիշտ Ռ. Ռոստրոպովիչի արարքը. երբ նա լսեց երկրաշարժի մասին, Նյու-Յորքում անմիջապես երկու համերգ տվեց և երկու միլիոն դոլար ուղարկեց Հայաստան: Ապա նույնանման համերգ կազմակերպեց Մոսկվայում: Ժողովուրդը հիացմունքով էր վերաբերում այդ կատարումներին: Ռաիսա Գորբաչովան 10 000 ռուբլի նվիրելուց հետո հարցրեց նրան՝ «Մաեստրո, ես հիացած եմ ձեր մարդասիրությամբ, որ այդ տարեց հասակում ողբացյալի նման եք վերաբերում երկրաշարժին, այն դեպքում, երբ Հայաստանում չեք եղել»: Ռոստրոպովիչը վարանեց, ապա ասաց՝ «Ես ձեզ կպատմեմ մի պատմություն իմ կյանքից, և դուք կզգաք հարազատության չափը»:

Ես տաս տարեկան էի, երբ հայրս մեր դպրոցի տնօրենի շնորհակալական գրությամբ տարավ ինձ Մոսկվա՝ երաժշտություն ուսանելու: Նրա առողջական վիճակը լավ չէր, հոգսերը շատ էին, ուստի, երբ հանձնաժողովը ինձ գովեստով ընդունեց ուսումնարան, նա շատ ուրախացավ: Դուրս գալով փողոց՝ մոլորվեց՝ ինչպես լուծի բնակարանի խնդիրը: Նա դիմեց անցնող-դարձողին՝ պատմելով իմ մասին: Մարդիկ խորհուրդներ էին տալիս ու հեռանում: Մինչև օրվա կեսը արդյունք չեղավ: Նա հիասթափվեց և ուզում էր ինձ գյուղ վերադարձնել: Այդ պահին մի սևահեր կին իր տղայի ձեռքից բռնած մոտեցավ մեզ՝ «Ես էլ եմ նեղ վիճակում, բայց կօգնեմ ձեզ, որդուս կողքին տեղ կպատրաստեմ, թող ապրի, ուսումից հետ չընկնի: Դուք կարող եք հանգիստ վերադառնալ գյուղ: Շնորհալի երեխան պիտի լավ ապագա ունենա»: Հայրս իր երախտագիտությունը հայտնեց և գնաց: Շուտով նա վախճանվեց, իսկ իմ «ծնողներն» ինձ հետ մնացին մինչև կոնսերվատորիան ավարտելս: Ինձ ամուսնացրին և հետո միայն թույլ տվեցին առանձին կյանք վարել: Ճակատագիրը մեզ բաժանեց, բայց ես Ռոստրոպովիչ երաժիշտ եմ դարձել իմ էմմա Մանուկովնա մայրիկի շնորհիվ: Չէ՞ որ նա հայ է, և նրա ազգը դժբախտության մեջ է այսօր:

Միխաիլ և Ռաիսա Գորբաչովներն իրենց երախտիքի խոսքն ասացին և հեռացան:

Շիրազյան մոտիվներ

Գրողների համագումարներից մեկի ժամանակ Հովհաննես Շիրազն այգում զբոսնելիս տեսնում է իր հայրենակիցներ Շմավոն Թորոսյանին և Քաջիկ Գրիգորյանին:

- Օ՜ն, անտաղանդներ, հոս ի՞նչ կեցեք...

- Շիրազ ջան, մեզի համար հյուրանոց չեն պատվիրել, մնացել ենք դրսում, բաց երկնքի տակ, - ասում է Քաջիկը: Մինչև լուս պիտի հոս նստենք, ծառերի տակ:

- Օ՜ն, ինչ կխոսաս, ծառերու տակ ոնց կմնաք, ելե՛ք, ելե՛ք էրթանք տուն:

- Չէ, վարպետ ջան, նեղություն մի քաշե, խորաթա կենենք մինչև լուսը բացվի,- առարկում են հարենակիցները:

- Օ՜ն, ի՞նչ կխոսեք, ելե՛ք էրթանք տուն,- պնդում է Շիրազը:

Շմավոնն ու Քաջիկը հետևում են նրան: Մի քիչ քայլելուց հետո, Շիրազն հանկարծ հիշում է, որ տանն ավելորդ անկողին չկա, մտածում է ինչ անի, ինչպես հետ կանգնի իր հրավերից: Սկսում է Շմավոնից:

- Օ՜ն, Շմավոն, ես եմ մեծ, թե՞ Գյոթեն:

Սա առանց երկար-բարակ մտածելու պատասխանում է, թե վարպետ, Գյոթեն, նա «Ֆաուստ» է գրել ...

- Ինչդ թե, օ՜ն, ես գիտեի թե դու գրականությունից բան կհասկնաս, աչքիս էլ չերևաս, ես քեզ մարդու տեղ չեմ դնե, գնա, ռադ էղի...

Շմավոնը շվարած հեռանում է: Մնում են երկուսով: Մի փողոց չանցած՝ դիմում է Քաջիկին՝

- Ես եմ մեծ, թե՞ Թումանյանը...

Քաջիկն արդեն գլխի է ընկնում և պատասխանում է՝

- է~, վարպետ, Թումանյանը «Անուշն» է գրե, դուն էլ «Սիամանթո և Խաչեզարեն», իհարկե, դուն ես մեծ...

Շիրազը լռում է: Հասնում են տան մոտ և դռան շեմին նորից հարցնում է՝

- Ես եմ մեծ, թե Նարեկացին...

Քաջիկը ծիծաղում է՝

- Շիրազ ջան, ես գնացի Շմոյի մոտ...

Պատրաստեց՝ Հրանտ Սարգսյանը

Короткая, но яркая жизнь Аршалуйса Долбаяна

Семья у Аршалуйса Долобаяна была самая что ни на есть крестьянская. Но у отца его – Мнацакана было одно сильное увлечение – музыка. Он играл в ансамбле «Давул–зурна», был видным борозачи (духовой инструмент).

Аршалуйс с бубном (первый слева).

Как и отец, Аршалуйс был влюблён в музыку, умел играть на различных инструментах и другим помогал приобщиться к прекрасному. Позднее уже, А. Долобаян был членом Восточного ансамбля при клубе Краснодарского краевого совета, играл на таре. Этот ансамбль регулярно выступал с концертами в городах и населённых пунктах Северного Кавказа. Кстати, приезжал коллектив и в Нор–Нахичеван, и в Чалтырь.

В 1943 году Аршалуйс успешно окончил армянскую школу в Ростове, а в 1940–м и полный курс Кубанского государственного медицинского института в Краснодаре. И сразу же его призвали в армию на кадровую службу.

В начале Великой Отечественной войны часть А. Долобаяна находилась на западной границе СССР и дислоцировалась в приграничном городе Лонжа. Там Аршалуйс служил военврачом.

С первых же дней войны подразделение попало в окружение и было захвачено в плен. Здесь, в концентрационном лагере, А. Долобаян оказывал врачебную помощь больным, раненым, истощённым. По словам очевидца–узника того же лагеря военнопленных, кто–то донёс в гестапо на Долобаяна, что он является членом тайной партийной группы и ведёт агитационную работу среди узников. Аршалуйса вывезли из лагеря и расстреляли. Так оборвалась короткая, но яркая жизнь красивого, талантливого, доброго, замечательного человека. Старшая сестра Аршалуйса Назик, глубоко верующая женщина, до конца своих дней молилась за упокой его души.

Агарон ШИРИНЯН

Правление «Ново–Нахичеванской–на–Дону армянской общины», коллектив газеты «Нахичевань–на–Дону» выражают глубокое соболезнование семье Самургашевых в связи со скоропостижной кончиной дорогого человека – отца

САМУРГАШЕВА ВАРТЕРЕСА СЕМЁНОВИЧА